https://doi.org/10.46991/hc.2022.18.2.192

H. Zh. Harutyunyan – Pertsh Sergeevich Boshnaghyan: Essays from Military, Scientific and Public-Political Activities or MEMENTO VIVERE. Yerevan, Publishing House "Limush", 2022, 200 p.

Haykaz Hovhannisyan
https://orcid.org/0000-0001-5709-5248
Doctor of History, Professor at the Chair of Armenian History of YSU
haykaz.hovhannisyan@ysu.am

Keywords: P.S. Boshnaghyan, H.Zh. Harutyunyan, geology, Yerevan State University, National Assembly of the Republic of Armenia, scientific research, nature protection

The review briefly presents an analysis of all the priority problems addressed by the author of the monograph H.Zh. Harutyunyan. A focus has been made on the military career of P.S. Boshnagyan and his scientific and socio-political (deputy of the National Assembly of the Republic of Armenia) activities. The book received our high appraisal as an extremely important work, which presents the image of a true citizen of his country, devoted to the ideals of the Motherland. It is no coincidence that the prefaces to the monograph by H.Zh. Harutyunyan were written by prominent figures of our time – Lieutenant-General M.G. Grigoryan, Dean of the Faculty of Geology and Geography M.A. Grigoryan, as well as the Director of the Center of Russian Studies at the Faculty of International Relations of YSU, deputy of the National Assembly of the RA of the 4th convocation A.V. Safaryan.

Հարությունյան Հ. Ժ. – Պերճ Սերգեյի Բոշնաղյան. Ուրվագծեր ռազմական, գիտական և հասարակական-քաղաքական գործունեությունից կամ MEMENTO VIVERE Երևան, Լիմուշ հրատ., 2022, 200 էջ:

Հայկազ Հովհաննիսյան
պ.գ.դ., ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Հիմնաբառեր՝ Պ.Ս. Բոշնաղյան, Հ.Ժ. Հարությունյան, երկրաբանություն, Երևանի պետական համալսարան, ՀՀ ԱԺ, գիտական ուսումնասիրություններ, բնապապահպանություն:

Գրախոսականում համառոտ տրված է բոլոր այն առաջնային հիմնախնդիրների վերլուծությունը, որոնց անդրադարձել է մենագրության հեղինակ Հ.Ժ. Հարությունյանը: Խոսքը վերաբերում է ինչպես Պ.Ս. Բոշնաղյանի ռազմական գործունեությանը, այնպես էլ նրա

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2022

կերպարին որպես գիտնականի և ՀՀ ԱԺ-ի պատգամավորի: Մեր կողմից այն արժևորվել է որպես հույժ կարևոր մենագրություն և թե, ինչպիսին պետք է լինի պետության իսկական քաղաքացու և հայրենիքի նվիրյալի կեպարը: Պատահական չէ, որ գրքին առաջաբաններ են գրել մեր օրերի նշանավոր գործիչներ՝ գեներալ-լեյտենանտ Մ.Գ. Գրիգորյանը, ԵՊՀ-ի Երկրաբանության և աշխարհագրության ֆակուլտետի դեկան՝ Մ.Ա. Գրիգորյանը և ԵՊՀ Միջազգային հարաբ. ֆակ. Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնի տնօրեն, ՀՀ ԱԺ-ի IV գումարման պատգամավոր՝ Ա.Վ. Սաֆարյանը:

А.Ж. Арутюнян - Перч Сергеевич Бошнагян: Очерки из военной, научной и общественно-политической деятельности или MEMENTO VIVERE. Ереван, Изд. Лимуш, 2022, 200 с.

Айказ Оганесян
доктор исторических наук, профессор кафедры истории Армении ЕГУ

Ключевые слова: П.С. Бошнагян, А.Ж. Арутюнян, геология, Ереванский государственный университет, НС РА, научные исследования, охрана природы.

В рецензии кратко представлен анализ всех первоочередных проблем, к которым обратился автор монографии А.Ж. Арутюнян. Речь идет как о военной карьере П.С. Бошнагяна, так и о его научной и общественно-политической (депутат национального собрания РА) деятельности. Книга получила нашу высокую оценку как чрезвычайно важный труд, в которой представлен образ настоящего гражданина своей страны, преданного идеалам Родины. Не случайно, что предисловия к монографии А.Ж. Арутюняна написаны видными деятелями наших дней – генерал-лейтенантом М. Г. Григоряном, деканом геологического и географического факультета ЕГУ М.А. Григоряном, а также директором Центра российских исследований при факультете международных отношений ЕГУ, депутатом Национального собрания РА 4-го созыва А.В. Сафаряном.

* * *

ԵՊՀ պատմության ֆակուլտետի համաշխարհային պատմության ամբիոնի դասախոս, պ.գ.դ., պրոֆ. Հակոբ Ժ. Հարությունյանի՝ տակավին վերջերս հրատարակած և կենսագրական բնույթի արդեն թվով երրորդ ուսումնասիրությունը նվիրված է մեր ոչ վաղ անցյալի նշանավոր դեմքերից մեկին՝ Պերճ Սերգեյի Բոշնաղյանին: Վերջինս յուրահատուկ անձնավորություն էր, որն իր ապրած կյանքի 84 տարիների ընթացքում իրեն դրսևորեց նախ որպես հմուտ ռազմական գործիչ, ապա՝ գիտնական-երկրաբան, իսկ կյանքի մայրամուտին՝ նաև հասարակական-քաղաքական ասպարեզում՝ ընտրվելով ՀՀ ԱԺ պատգամավոր: Անշուշտ, նախախնամությունն ու բնությունը նրա հանդեպ գտնվել են առավել քան շռայլ, քանզի անհնարին է, որ մեկ անհատը կարողանա իրեն դրսևորել միանգամից երեք, միմյանց չկապակցված ասպարեզներում:

1938 թ. ընդունվելով ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը՝ 1941 թ. հայրենասիրական մղումներով Պ.Ս. Բոշնաղյանը շատերի նման ևս մեկնում է ռազմաճակատ և շատ շուտով

նշանակվում հայկական Թամանյան 89-րդ դիվիզիայի 390-րդ և 526-րդ գնդերի շտաբի պետ: Սակայն ուշագրավն այն է, որ բացարձակապես չունենալով ռազմական կրթություն՝ նա հասցրել էր պատերազմի ընթացքում խորապես ուսումնասիրել մարտավարության տակտիկառազմավարական գաղտնիքները, ավելին՝ հասցրել պարգևատրվել բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով (Կարմիր աստղի, Մարտական կարմիր դրոշի, Հայրենական մեծ պատերազմի առաջին երեք աստիճանի և այլն):

Մեծ հայրենականին հաջորդեցին գիտական գործունեությանը նվիրաբերած տարիները, որոնք հանգամանալից ներկայացված են գրախոսվող մենանագրության երկրորդ գլխում: Պերճ Բոշնաղյանն աչքի է ընկնում իր բացառիկ գիտելիքներով ու նպատակաուղղվածությամբ. 1948 թ. աշխատանքի է ընդունվում ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետում: 1955-1965 թթ., երբ կառուցվում էին ԵՊՀ նոր մասնաշենքերը, այդ կարևոր ժամանակաընթացքում Պ. Բոշնաղյանը նշանակվեց համալսարանի տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնում: Տակավին 32-ամյա երիտասարդին նման բարձր ու պատասխանատու պաշտոնում նշանակումը պատահականություն լինել չէր կարող: Այդ տարիներին էլ՝ 1955 թ., նա հաջողությամբ պաշտպանում է իր թեկնածուական ատենախոսությունը՝ «Արարատյան գոգավորությունում տարածված սպիտակահողերի ինժեներաերկրաբանական հետազոտությունը» թեմայով:

Այս ժամանակից էլ սկսած՝ մինչև 1999 թվականը՝ ՀՀ ԱԺ պատգամավոր ընտրվելը, նա լիովին նվիրել է երկրաբանական գիտության զարգացման ու առաջընթացի կարևոր գործին: Արարատյան դաշտավայրի երկրաբանական հիմնահարցերին զուգահեռ նրա հետագա ուսումնասիրությունների մեծ մասը առնչվում էին Սյունյաց աշխարհի երկրաբանական խնդիրներին: Նա իր հետազոտություններում բազմիցս նշում էր, որ երբ Հայաստանը դրսում անվանում են Փոքր Ուրալ, ապա նախևառաջ նկատի ունեն հենց Սյունիքի տարածաշրջանը:

Գրախոսվող աշխատությունում ուշագրավ է այն, որ հեղինակ Հ. Ժ. Հարությունյանը վեր է հանում այն քննադատական վերլուծությունները, որոնք տեղ են գտել Պ. Ս. Բոշնաղյանի գիտական ուսումնասիրություններում: Պ. Բոշնաղյանը բազմիցս ընդգծել է այն կարևոր միտքը, որ երկրաբանությունը միայն նրա համար չէ, որ հայտնաբերվեն նոր հանքեր, և դրանք անխնա, առանց նախնական հաշվարկներ կատարելու շահագործվեն: Այստեղ ամենակարևոր դեր ունեն դրա հետևանքները: Նույն կերպ էլ նա քննադատում էր խորհրդային տարիներին բազմաթիվ հէկերի կառուցումը, թույլ տրված բաղթողումներն ու անդառնալի հետևանքները. խոսքը Ախուրյան, Դեբեդ, Աղստև, Հրազդան, Վեդի, Ողջի, Որոտան գետերի ավազանների վրա կառուցված հէկերի մասին է:

Հ. Ժ. Հարությունյանի ուսումնասիրության եզրափակիչ՝ երրորդ գլուխը նվիրված է Պերճ Բոշնաղյանի հասարակական-քաղաքական գործունեության լուսաբանությանը: Այն վերնագրված է «Պ. Ս. Բոշնաղյանի հասարակական-քաղաքական գործունեությունը 1999-2003 թթ.» և բաղկացած է չորս պարագրաֆներից: Ընդգծվել է, որ նա ԱԺ ամբիոնն առաջին հերթին օգտագործել է հենց բնապահպանական բնագավառում առկա բացթողումները քննադատելու, առավել արդյունավետ լուծումներ առաջարկելու համար: Հեղինակի բնորոշմամբ պատգամավորության 4 տարիների ընթացքում Պ. Բոշնաղյանը հետապնդում էր մեկ գլխավոր նպատակ՝ թույլ չտալ կրկնել նախկինում թույլ տված սխալները: Պատահական չէ, որ նրա կողմից կազմած ու քննարկման ներկայացրած օրենքների նախագծերն ընդունվում էին գրեթե առանց դիտողությունների:

Իր կյանքի 84 տարիներից 54-ը Պերճ Բոնացյանը նվիրեց հարազատ համալսարանի Երկրաբանության ֆակուլտետին: Գրքի հեղինակ Հ. Հարությունյանը հանգամանորեն անդրադառնում է Պերճ Բոշնաղյանի գործունեությանը ֆակուլտետի դեկանի, Ընդհանուր և կիրառական երկրաբանության ամբիոնի վարիչի պաշտոններում, ինչպես նաև վերջինիս նախաձեռնություններին: 1968 թ. նրա ջանքերով հիմնվեց Հայկական երկրաբանական ընկերությունը: 1970 թ. դեկտեմբերին Պ. Ս. Բոշնաղյանին շնորհվեց «ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան» պատվավոր կոչումը: Իսկ մինչև իր վախճանը նա եղել է ՀՀ ԶՈՒ և իրավապապահ մարմինների վետերանների միության նախագահը: Գրքում զետեղված են Պ. Ս. Բոշնաղյանի կյանքի ու անցած ուղու մասին պատմող գեներալ-լեյտենանտ Մ. Գ. Գրիգորյանի, ԵՊՀ երկրաբանության և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Մ.Ա. Գրիգորյանի և ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնի տնօրեն, ՀՀ ԱԺ IV գումարման պատգամավոր Ա. Վ. Սաֆարյանի հուշերն ու նրա գործունեությանը տրված գնահատականները:

Հարկ է ընդգծել, որ շարադրանքում մեծապես օգտագործվել են Հայաստանի ազգային *արխիվում պահպանված նյութերը, առանձնակի ուսումնասիրվել են* Պ. Բոշնաղյանի գիտական ժառանգությունն ամփոփող փաստաթղթերը: Գիրքը եզրափակում են ընդարձակ հավելվածների բաժինները, որոնք վերաբերում են Պ. Ս. Բոշնաղյանի կյանքի ու գործունեության հիշարժան տարեթվերին, հրատարակած աշխատությունների ժամանակագրական ցանկին, 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմին նրա մասնակցությանը, ինչպես նաև Պ. Բոշնաղյանի՝ Հայաստանի Հանրապետության երկրորդ գումարման Ազգային ժողովում ունեցած ելույթներին: